ԱՍՏՎԱԾԱՅԻՆԸ ԱՌԱՔԱՔՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՄԱՐ

«ԽՈՒՄՔՈՎ ԵՎ ԱՌԱՔԵԼՈՒ Մ. ԴԵՐՍԵՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆՈՒՄ ԱՅՍՕՐՎԱՆՔՈՎ ԻՆՉ ԱՌԱՔԵԼՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՆՔ»

«Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆ ՀԱՆՁՆՎԵՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԿՈՒ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական կոնդակով Հայ Եկեղեցու բարերարներ Սարո Խոդավարդյանը և Հարություն Աղասարգիսյանը պարգևատրվել են Հայ Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» պատվո շքանշանով:

Հունիսի 30-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, ձեռամբ Վեհափառ Հայրապետի, տեղի ունեցավ շքանշանների հանձնման հանդիսավոր արարողությունը: Բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը, ապա ընթերցվեց Հայրապետական սրբատառ կոնդակը, որով Նորին Սրբությունն իր գնահատանքն էր հայտնում եկեղեցանվեր բարերարներին:

Իտալահայ բարերար Սարո Խոդավարդյանը երկար տարիներ վարում է Միլանի Սուրբ Քառասուն Մանկունք եկեղեցու համայնքային վարչության փոխատենապետի պատասխանատու պաշտոնը: Ի հավելումն բազմաթիվ եկեղեցաշեն գործերի, նա իր մասնակցությունն է բերել նաև Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու բարեզարդման գործին՝ հանձն առնելով եկեղեցու ներքին լուսավորության համակարգի բարերարությունը:

Ամերիկահայ Հարություն Աղասարգիսյանը ևս Հայ Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նվիրյալներից է և նախանձախնդրորեն մասնակցում է Հայ Եկեղեցու ԱՄՆ Արևմտյան թեմի եկեղեցական կյանքին՝ կամավորաբար ստանձնելով զանազան հանձնառություններ:

Ստանալով Հայ Եկեղեցու շքանշանը՝ տիար Սարո Խոդավարդյանը Վեհափառ Հայրապետին շնորհակալություն հայտնեց իրեն արժանացրած պատվի համար՝ մասնավորաբար նշելով, որ լինել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայրենիքի կողքին՝ նշանակում է հաճախ գալ Մայր Աթոռ Ս. Էջմիածին և Մայր Հայրենիք՝ նախ զորացնելու և ապա զորավիգ լինելու նրանց: Երախտիքի խոսք ասաց նաև Հարություն Աղասարգիսյանը:

Վերջում ներկաներին իր հայրական խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը: «Մենք կարևորում ենք բարեգործության երևույթը և առավելաբար ոգին, որով կատարվում է այդ բարեգործությունը: Մեզ համար մխիթարություն է տեսնել, որ երկու երիտասարդ հայորդիք իրենց ունեցվածքից մաս ու բաժին են հանում՝ մասնակցելով Մայր Եկեղեցու և Հայրենիքի զորացման սրբազան գործին», - նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Հանդիսությանը գեղարվեստական հայտագրով մասնակցեց Երևանի Կամերային երգչախումբը՝ խմբավարությամբ Հարություն Թոփիկյանի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ